

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ «ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԾԻԳ-Ի ԿՈՂՄԻՑ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ  
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ և ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Կրթության բարելավում» վարկային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) հետապնդում է երկու նպատակ. (1) Հանրակրթության հետագա բարելավում և (2) մասնագիտական կրթական նորարարության խթանում: Ծրագրի տևողությունն է 5 տարի, ծրագրի արժեքն է 37,5 մլն. ԱՄՆ դոլար (Համաշխարհային բանկ՝ 30 մլն. ԱՄՆ դոլար և 7,5 մլն. ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության ներդրում): Համաշխարհային բանկից ֆինանսավորումը իրականացվում է հավասարապես երկու ֆոնդերից՝ Միջազգային զարգացման ընկերակցության (ՄՁԸ) և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎՋՄԲ) միջոցներից: Համաշխարհային բանկի ֆինանսավորման ընդհանուր չափը կազմում է 80%, իսկ ՀՀ Կառավարության համաֆինանսավորման չափը՝ 20%:

Ծրագրի բաղադրիչներն ու ենթաբաղադրիչներն են.

**Բաղադրիչ 1. Հանրակրթության որակի բարելավում , որը բաղկացած է չորս ենթաբաղադրիչից**

**Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում**

***Ենթաբաղադրիչի նպատակներն են.***

- Երեխաներին նախապատրաստել դպրոց մուտք գործելուն՝ ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ,
- Մեծացնել նախադպրոցական կրթության ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը՝ ներառելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

Այս ենթաբաղադրիչի շրջանակներում ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ստեղծվել է կառավարման մարմին՝ հանձնաժողով: Հանձնաժողովի կողմից հաստատված նախակրթարանների ստեղծման ժամանակացույցի համաձայն 2015-2017թթ. 80 նախակրթարաններ են հիմնվել Գեղարքունիքի (11), Կոտայքի (13), Շիրակի (12), Տավուշի (6), Լոռու (6), Արմավիրի (12), Արագածոտնի(8), Արարատի (9) և Սյունիքի (3) մարզերում: Մասնավորապես, իրականացվել են համապատասխան տարածքների բարեկարգման, գույքով համալրման աշխատանքներ, ձեռք են բերվել անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութեր, խաղալիքներ, պիտույքներ և այլն: Այդ նախակրթարաններում ընդգրկված են շուրջ 2500 երեխա, վերապատրաստված դաստիարակների թիվը՝ 180 է:

2018-2019թթ. միկրոծրագրեր կիրականացվեն Երևանում, Վայոց Ձորի մարզում և այլ մարզերում ըստ անհրաժեշտության: Ծրագրի շրջանակներում Կրթության ազգային ինստիտուտի կողմից իրականացվում են նոր ստեղծվող նախակրթարանների դաստիարակների վերապատրաստումներ: Ծրագրի շրջանակներում ակնկալվում է մինչև ծրագրի ավարտը՝ 2019թ. սեպտեմբեր, հիմնել ընդամենը շուրջ 130 նախակրթական հաստատություններ ՀՀ համայնքներում՝ ընդգրկելով մոտ 3550 5-6 տարեկան երեխաների՝ այդպիսով 5-6 տարեկան երեխաների համար նախադպրոցական կրթությունը դարձնելով համընդհանուր և ապահովելով ընդգրկվածության աճ այդ տարիքային խմբի երեխաների համար: Ծրագրի ավարտին վերապատրաստված դաստիարակների թիվը կլինի շուրջ 284:

**Ենթաբաղադրիչ 1.2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը**

**Ենթաբաղադրիչի նպատակներն են.**

- Բարձրացնել կրթության որակը և համապատասխանությունը առանձին գործող ավագ դպրոցների ցանցում (արդիական լաբորատոր սարքավորումների մատակարարման և ուսուցման ընթացքում համապատասխան տեղեկատվական նյութերով ապահովման միջոցով),
- Ծրագրի շրջանակներում համապատասխան չափանիշներով ընտրված ավագ դպրոցների կարողությունների հզորացում և հիմնանորոգում:

Հիմնանորոգվող դպրոցների ընտրությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված չափանիշների համաձայն, որոնք են՝ դպրոցի շենքի տեխնիկական պայմանները, կառուցման տարին, սպասարկման ոլորտը և չափը: Ընտրված դպրոցները ներառում են ինչպես մարզային, այնպես էլ մայրաքաղաքի դպրոցներ: Թվով 5 ավագ դպրոցների (Արարատի ավագ դպրոց, Նոյեմբերյանի ավագ դպրոց, Մարտունու ավագ դպրոց, Մեծամորի թիվ 2 ավագ դպրոց, Հրազդանի թիվ 1 ավագ դպրոց) հիմնանորոգման աշխատանքներն ընթացքում են, արդեն իսկ կատարվել են աշխատանքների 52 տոկոսը, իսկ 2-րդ փուլով նախատեսված մյուս ավագ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման գործընթացն ավարտվել է: Դրանց հիմնանորոգման աշխատանքները կմեկնարկեն 2018 թվականին:

2018-2019-ին նախատեսվում է իրականացնել 107 ավագ դպրոցներին ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և աշխարհագրություն ուղղություններով լաբորատոր սարքավորումների տրամադրումը: 2019-ին նշված լաբորատոր սարքավորումները կտրամադրվեն նաև միջնակարգ դպրոցների ավագ դասարաններին:

**Ենթաբաղադրիչ 1.3. Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում**

**Ենթաբաղադրիչի նպատակներն են.**

- Բարձրացնել կրթական համակարգում հաղորդակցության արդյունավետությունը SCS-ի միջոցով:
- Աջակցել սովորողների գիտելիքների ձեռքբերումների մշտադիտարկմանը և գնահատմանը՝ ԿՏԱԿ-ի հզորացման միջոցով:

Ավարտվել են մասնագիտական և հանրակրթական կառավարման տեղեկատվական համակարգերը մեկ միասնական համակարգի մեջ ինտեգրման աշխատանքները: Այն ապահովում է Հայաստանի բոլոր կրթական հաստատություններից տվյալների հավաքագրումն ու վիճակագրական վերլուծությունների կատարման և հանրությանը համակարգված մատուցումը:

2015 թվականին «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ստեղծվել են վիրտուալ լաբորատորիաներ երկրաչափություն, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների համար. ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաները՝ 50%-ի չափով: Ընթացիկ վարկային ծրագրով ընթացքում է Ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների համար մնացած 50%-ի ուղղությամբ էլեկտրոնային կրթական նյութերի մշակումն: Աշխատանքները կավարտվեն 2017 թվականի դեկտեմբերին:

2018թ.-ին նախատեսվում են ԿՏԱԿ-ի նոր տարածքի հիմնանորոգման, նոր տվյալների մշակման կենտրոնի (Data centre) նախագծման և ստեղծման աշխատանքները:

Ենթաբաղադրիչի շրջանակներում ավարտվել են ՏՀՏ վերապատրաստումների 7 մոդուլների մշակման և Երևանից ու մարզերից շուրջ 30 վերապատրաստողների վերապատրաստման աշխատանքները: Մշակված մոդուլների միջոցով 2018-2019 թթ. կվերապատրաստվեն մոտ 4000 ուսուցիչ: Ենթաբաղադրիչի շրջանակներում մարզերում կստեղծվեն համակարգչային սարքավորումների սպասարկման կենտրոններ: 2018-2019թթ. նախատեսվում է նաև դպրոցներում իրականացնել համակարգչային սարքավորումների անհրաժեշտ թարմացումներ:

### **Ենթաբաղադրիչ 1.4 Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով**

#### ***Ենթաբաղադրիչի նպատակներն են.***

- Բարելավել կրթության որակը կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով:
- Ապահովել սովորողների գիտելիքների և հմտությունների բարելավումը համաձայն արդի պահանջների:

Ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվող գործողությունների արդյունքում լուծում կստանան առկա խնդիրները՝ հանրակրթական դպրոցի տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերին համապատասխան կապահովվի առարկայական չափորոշիչների ու ծրագրերի վերանայումը, և կարճատև վերապատրաստումների միջոցով ուսուցիչները կկարողանան իրենց մանկավարժական գործունեությունն իրականացնել առարկայական չափորոշիչներում և ծրագրերում կատարված փոփոխություններին համապատասխան: 2016 թվականին կատարված կարիքների գնահատման հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել է հանրակրթության բովանդակությունը սահմանող հիմնական փաստաթուղթը՝ ազգային կրթակարգը: 2018-2019 թվականներին պետք է մշակվեն և կիրառության մեջ դրվեն հանրակրթության ինը բնագավառների բոլոր առարկայական վերանայված չափորոշիչները և ծրագրերը, որոնց համապատասխան պետք է ստեղծվեն նոր դասագրքեր և ուսուցչի ձեռնարկներ: Յուրաքանչյուր առարկայական չափորոշիչի և ծրագրի ներդրմանը պետք է նախորդեն ուսուցիչների կարճատև վերապատրաստումներ:

### **Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆԱՀ) զարգացմանը**

#### **Բաղադրիչի նպատակն է.**

- Բարձրացնել բուհերի կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը,
- Բարձրացնել բուհական կրթական ծրագրերի հասանելիությունը,
- Խթանել համագործակցությունը բուհերի, մասնավոր սեկտորի և գիտահետազոտական ինստիտուտների միջև:

Այս նպատակների իրագործման համար ստեղծվել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամ (ՆԱՀ), որի միջոցները մրցակցային հիմունքներով դրամաշնորհների ձևով ուղղվում են բուհերում նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացմանը և բուհերի կարողությունների հզորացմանը: 2015 թ. կազմակերպվել և իրականացվել է

բուհերին դրամաշնորհների տրամադրման առաջին շրջափուլը, որի արդյունքներով 2015 թվականի դեկտեմբերին դրամաշնորհներ են տրամադրվել 6 բուհերի, որից 5-ը կոնսորցիում ծրագրեր են: Դրանց ավարտը նախատեսված է 2017 թվականի դեկտեմբերին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՆԱՀ շրջանակներում մինչ այս դրամաշնորհներ են ստացել հիմնականում խոշոր բուհերը, այնինչ անհրաժեշտություն կա աջակցելու նաև փոքր բուհերին, 2016 թվականին ՆԱՀ շրջանակներում դրամաշնորհներ են տրամադրվել դեռևս ՆԱՀ շահառու չհանդիսացած 6 բուհերի: «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված է ևս մեկ շրջափուլով շուրջ 5 բուհերին դրամաշնորհների տրամադրում 2018-2019 թվականներին: Վարկային ծրագրի ավարտին նախատեսվում է բարելավել պետական-մասնավոր համագործակցության բարձրագույն կրթության ոլորտում կոնսորցիում ծրագրերի իրականացման միջոցով, բարելավել բուհերի կարողությունները և ենթակառուցվածքները, ինչպես նաև ունենալ ՆԱՀ ծրագրերի առնվազն 17 շահառու բուհեր: